


THE
DICKRIS PUBLISHING CO.
628 Third Avenue,
NEW YORK CITY.



ՏԻԳՐԻՍԻ ՍԻՒՆԱԿՆԵՐԸ ԲԱԾ
ԵՆ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ԱՌՁԵՒՑ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԱՂՓԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ, ԹԻՒ 21

ՆԻՒ ԵՈՐԻ, ՇԱԲԱԹ, ԱՊՐԻԼ 2, 1898

ԳԻՆ 3 ՍԷՆԹ

Բ Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

Երկուշաբթի օրը նախագահ Մաք
քիլի Բոնկրէսին հաղորդեց Մէյն
մարտանաւը ընկղմելուն պատճառը
քննող յանձնախումբին տեղեկագիրը.
և Հաուզ օ Փ Ռեփրիզէնթէթիվը
տեղեկագիրը իւր արտաքին գործոց
յանձնաժողովին զրկեց: Իսկ Երեքշաբ
թի Սինէթին մէջ տեղի ունեցաւ մեծ
հակաճառութիւն, որոյ ժամանակ
խումբ մը Սինէթըններ այլ և այլ առ
աջարկութիւններ մատուցին: ոմանք
Բիւպայի անկախութիւնը առաջարկե
ցին և ոմանք ալ առաջարկեցին ան
միջապէս պատերազմ հրատարակել
Սպանիոյ դէմ: վերջապէս Սինէթը
մեծամասնութեամբ որոշեց որ նախա
գահը պատերազմ հրատարակէ: Սա
կայն նախագահը խոչնդեմ կը վարուի,
կը վախեց ու իր Բոնկրէսը ինքնին,
սակեց նախագահի հաւանութեան,
պատերազմ հրատարակէ Սպանիոյ
դէմ:

Վերջինքալ անդեկագիրը ցոյց
կուտայ թէ Մէյն Մարտանաւը ար
տաքին պայթելով մը պայթած է.
այս պայթելին կամ թօրփիտօ և կամ
Մայն մէջ, որն ճիշդ նաև ուն սակը
դրուած էր նաև հանգուտի կողմէն:
Սպանիոյ քննիչ յանձնաժողովը
դեռ իւր տեղեկագիրը յայտարարած
չէ. եթէ յայտարարէ պիտի ըսէ թէ
Մէյնը ներքին պատճառով պայթած է:
Աւստրիոյ արտաքին գործոց նա
խարարը հրաւիրած է Գաղղիան որ
միասին միջամտեն Սպանիոյ և Մ. Նա
հանգաց միջև:

Չորեքշաբթի օր Հաուզ օ Փ Ռե
փրիզէնթէթիվի մէջ Մր. Պէյլի առ
աջարկեց որ Բուպայ անմիջապէս
անկախ ճանչցուի: Ժողովին Ատենա
պետը ջանաց այս առաջարկը մերժե
լու, և յաջողեցաւ:

Ուսումը մը Ռեփրիզէնթէթիվը
Սինէթըններ նախագահին դիմեցին և ի
րեն զրուցեցին որ եթէ կարուկ մի
ջոցներ ձեռք չ'առնէ, պիտի ստիպ
ուին իրեն դէմ քուէ տալու. և ամ
բողջ Բոնկրէսը յանձնախումբ մը
կազմեց որն նախագահին պաշտօնա
պէս պիտի ծանուցանէ թէ եթէ Բոն
կրէսն որոշումը չը յարգէ ու անոր
համաձայն վարուի՝ պիտի ստիպուին
իրենց վստահութիւնն վերցնել նա
խագահի վրայէն:

Մաքիլի նօթ մը զրկած է Մատ
րիտ, որով կը պահանջէ որ Սպանի
ան անմիջապէս Բուպայ անկախ հը
րատարակէ. այս նօթը վերջնագիր
մէջ, և կ'ըսուի թէ Սպանիա Չէ ժամ
պայմանաժամ ուղած է՝ խորհելու
համար: նախագահը, ամեն պարա
զայի տակ, պիտի սպասէ մինչև եր
կուշաբթի, ու անկէ վերջ պիտի ձը
գէ ամեն բան Բոնկրէսի կամքին եւ
որոշումին:

Մ. Նահանգաց կառավարութիւ
նը մտադիր է Տանիմարքայէն մար
տանաւեր գնելու. նաև կ'ուզէ նոյն
երկրի՝ Ազլանդանի մէջ ունեցած
պղտիկ կղզիները գնել, որոնք պա

տերազմի ժամանակ մեծ կարևորու
թիւն կ'ունենան իրրև ածուխ առ
նելու կայարաններ:

Սպանիական Յ մեծ մարտանաւեր
մեկնած են անցեալ օր Գաուիսինէն,
գաղտնի հրամանով: կը կարծուի թէ
ասոնք Ամերիկեան ջուրերը կուգան:

Մր. կլատսթընի հիւանդութիւ
նը անդամանելի է. և քիչ օրէն
մեծ ծերունին կը մեկնի այս աշխար
հէն: Երբ անցեալ ուրբաթ Մր. կլա
տսթընը ստիպեց իւր բժիշկը որ ճըշ
մարտութիւնը խօսի հիւանդութեան
մասին. բժիշկը ըսաւ իրեն տխուր
իրականութիւնը: Գերունին բժիշկի
ձեռքը սեղմեց և շնորհակալութիւն
յայտնեց: Հիմակ Մր. կլատսթըն կը
պատրաստուի հանդարտապէս՝ մեծ
փոփոխումը կրելու, ինչպէս կ'ը
սէր Հէնրի Հայնէ:

Փիլիսոփայ մը ըսած է թէ՝
«մարդկութեան թշուառութեան եւ
ցաւերու պատճառն այն է որ մար
դիկ իրենց սոււնը կենալ չեն ուզեր».
կարելի է այս վարդապետութիւնը
ամեն անը ճշմարիտ չըլլայ, սակայն
քաղաքականութեան մէջ գոնէ ճըշ
մարիտ է: Պատերազմի սպառնալի
քը ամեն կողմէ կուգայ, որովհետև
Անգլիացիք գերազանց կը համարին
Չինական աշխարհը իրենց «բաղջր
Հօմէն»: Ռուսները իրենց իսպաները
կը ձգեն ու կ'ուզեն երթալ Մանչու
րիա: Մօսաւոր Արեւելեան խնդրոյն
յաջորդեց հեռուոր Արեւելեան խըն
դիրը: «Հիւանդ-մարդ» պիւս Սոււ
թանը չէ, այլ աստուծոյ որդին. երկ
նային ընտանիքներու մէջ կ'երեւի
տարափոխիկ հիւանդութիւն մը կայ:
Մուհամմէտ Մարգարէի փոխանոր
դէն ախար կը փոխուի երկնային կայ
սեր:

Եւրոպայի որդիները կուզեն Չի
նաստանը իրենց մէջ բաժնել. և
չառ մեծ վախ կայ որ այս բաժնու
մը առանց պատերազմի չ'ըլլար:

Չինական մի քանի հողակոյտնե
րու համար հաւանական է որ հազա
րաւոր Եւրոպացիներ պիտի գոհուին:
Առ այժմ Ռուսիան է որ առանց կա
թիլ մը արիւն թափելու՝ լռիկ մըն
ջիկ գործեց, ու առաւօտ մը աշ
խարհ արթնցաւ ու տեսաւ թէ թա
լիէնվաի եւ Փօրթ Արթըրի վրան
Ռուսական դրօշակը կը ծածանի: այս
լուրը բերող հեռագրի կցուած էր
սա վեհանաճնութիւն ցուցնող յայտա
րարութիւնը. «ապագային մէջ այս
նաւահանգիստները՝ ամեն ազգաց
նաւերը պիտի երթեւեկեն ազատօ
րէն»: Անգլիա այս արտակարգ վար
մունքին պատասխանեց՝ իւր Սաղա
ղականի հուժկու նաւատորմիցը փո
խադրելով Չինական ջուրերը:

Ու ասոր յաջորդեցին Անգլիոյ
Գաղթ. Օգնական նախարարի խօսքե
րը եւ թայմըլի խմբագրականը: նա
խարարը ըսաւ թէ «եթէ այսպէս շա

րունակուի, Անգլիայ իւր բոլոր ու
ժովը պիտի թող չ'տայ որ ուրիշ Տէ
րութիւն մը ստնակոխ ընէ իւր իրա
ւունքները»: և թայմը ալ գրեց թէ
«Անգլիա բողոքելէն ի գառ՝ ուրիշ
միջոցներ ալ գիտէ իւր պատիւը եւ
իրպուտը պաշտպանելու համար»:

Սակայն երեք տարիէ ի վեր Լօրս
Սօյսլըրի Գապիէթի հետեւած քա
ղաքականութիւնը աչքի առաջ ունե
նալով, դիւրին է յայտարարել թէ
այսպիսի սպառնալիքներ պարզ փամ
փուշտներ են, որոնք օդին մէջ կը
նեփուրեն եւ օդին մէջ կ'ոչնչանան
դեռ Մր. Փէթրսպուրկի կէս ճամբան
չը հասած:

Փաղղիայ Ռուսիոյ հետ է այս
խնդրոյն մէջ. և իր Սաղաղականի
նաւատորմիցի մարտանաւերու թիւը
Ձիւ հասցուցած է: Ճարտն հանդարտ
է. որովհետև կ'սպասէ նախ Չինաս
տանէն պատերազմի սուգանքը առնէ
և երկրորդ՝ Փաղղիայի ընարու
թիւններու արդիւնքին կ'նայի:

Եթէ պատերազմ ըլլայ, Ռուսիա
եւ Փաղղիա միասին պիտի կուրին
Անգլիոյ եւ Ճարտնի դէմ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԲՐՈՆԻԿ

Նորէն հանդէսներու մէջ ենք:
Այս երեկոյ թանգարանի Միութեան
հանդէսը, երկու շաբաթ վերջն ալ
Արքայանման Տիկիներու և Լսարանի
Վարչութեան հանդէսը: Բայց Լա
ուադրութիւնը ըրած էք, որ օր մը
զուտ մեր «Բէյթ»-ըն համար հանդէս
մը տուած չուներք: Մեզ չըլլապա
սող ժողովուրդը երկկողմներ և հան
դէսներ կը սարքէ ընդհանրապէս սոսկ
հանդէր և զուարճութեան նպատա
կով. իսկ մենք սգաւոր և սղջատ
ազգ ըլլալունու համար, հանդէր և
խրախմանքի տեսչը չէ որ կը մ'ղէ
զմեզ հանդէսներ և ներկայացուցներ
տալու, այլ ամեն անգամին ալ ասոնց
յայտագիրներուն վրան խոշոր տառե
րով կը գրենք ԻՆՎԵՍՏ բառը: Սր մը
մեր Եկեղեցիին ինպատ հանդէս մը,
օր մը 60,000 որբերուն ինպատ, և
այսօր ալ ինպատ մեր . . . տնակ
ազգատ մտքերուն:

Հ. Ե. Թ. Միութեան Ուսմակա
լութիւնը շատ ուշացաւ այս հանդէսը
տալու. Ծ-Յ ամիս առաջ կրնար այս
ընել և մենք ալ ճ ամիս առաջ կու
նենայինք մեր սուաղեալ մտքերուն
պատասպարան մը—Իրադարան-Լիթեր
ցարան մը: Աստուած տայ որ այս
հանդէսէն վերջն ալ ճ ամիս չսպա
սենք որ թանգ. Ուսմակալութիւնը
Ընթերցարանը հաստատէ:

Նրե Եօրեցիներու պարտքն է որ
այս երեկոյ նիւթական ամեն զոհողու
թիւն ընենք ինպատ հանդէսին. երբ
Ընթերցարան մ'ունենանք՝ այն ատեն
միայն պիտի կրնանք զմեզ բաղդա
տել Մասշուսէթսի փոքր Հայ գաղու
թի մը հետ:

Անցեալ կիրակուայ չափ բազմու
թիւն առաջին անգամն է որ կը խրա
նուր Ազատ Լսարանի Սրահին մէջ,
պիտի ըսէի երկուս բազմութիւն մը,
եթէ ներկայ եղող Հայ-Լայթի Տիկի
ներու թիւը Յ է աւելի ըլլար. Թերես
վերջին անգամն ըլլայ այսքան ժողո
վուրդ հաւաքել ինք վարչութիւնը
կրկին չը հրաւիրէ Տ. Թաւաշանեանը
և կամ ուրիշ վաճառական ճը խօ
սելու. . . «Յաջողութեան Պայման
ներուն» կամ «Հարստանալու Միջոց
ներուն» վրայ, ինչոր նիւթն էր Տ.
Թաւաշանեանի անցեալ կիրակէ: Ու
րիշ խօսողներ վերաւորանք թո՛ղ չը
սեպեն իրենց երբ կիրակուայ չափ բազ
մութիւ ունկընդիրներ չեն ունենար.
Գրական դար է այս. երբ մէկը կ'ազ
դարարէ թէ՛ «Մարդկութեան Ազա
տութեան» վրայ պիտի խօսի՝ շատ սիրտ
չենք ունենար լսելու զինքը, երբ ինք
ալ Ազատ մը չէ, բայց երբ մէկը յա
ջող և հարուստ ըլլալու վրայ ըսելիք
ներ ունի ու ինքն ալ Յաջող է. կը
վազենք կերթանք Յաջողութեան բեր
նէն իմանալու աղքատ չը մնալու
միջոցը:

Յաջող խօսողը ինքն ալ գիտցաւ
ինչո՞ւ համար հաւաքուած էինք զին
քը լսելու, ուստի քանի մը ըտպէ բզ
մեզ յաջողութեան երանանք առ
խարհներուն մէջ սաւառնեցուց:

«Երբ Տ. Չպուգճեան ինձ իմացուց
որ պէտք էր խօսիմ, ըսաւ Տ. Թաւաշան
եան, և ան ալ հարստանալու մի
ջոցներու վրայ, ես դիմեցի Պանքաս
և պահանջեցի իմ 6,000,000 այսպիսի
հարիւր հազար դրամս՝ որ այս երե
կոյ հոս բերելով 1000ական, 100000
ական տողար բաշխէի ունկընդիրնե
րուս. բայց մեծ եղաւ յուսախարու
թիւնս, երբ այսօր դիմեցի որ դրամ
ներս առնեմ՝ Պանքը գոց գտայ. . .
ուստի որոշեցի զձեզ հարստացնելու
համար լէքչըր մը խօսիլ, այն ալ
գրեցի որ հոս բերեմ ու խօսիմ ձեզ,
բայց դժբաղդաբար դրամս կորսն
ցուցի, և հոս գալով ու Պ. Չիթճեա
նը լսելով՝ կը տեսնեմ որ կորսնցու
ցած լէքչըրս ինք գտած է, որովհե
տև խօսեցաւ այնպիսի բաներ, որոնց
մի մասը ես Ձեզ պիտի ըսէի . . .
ծաղրներ. . . :

Ունկընդիրներս յուսահատած 1
սէնթ ֆէշին առնելէ, ժամի մը չափ
մտիկ ըրինք յաջող խօսողի ըսածները,
որոնք եթէ մեր տնտեսական կեանքին
մէջ գործադրենք՝ օր մըն ալ մեզ կը
հրաւիրեն . . . «Հարստանալու Մի
ջոցներուն» վրայ ճառախօսելու:

Թ. Չ.

Ն Ա Ի Ա Յ Ի Ն Լ Ո Ի Բ Ե Ր
Այսօր գալիք
Սթ. Լուիզ — Սառութհամթընէն
Վաղը գալիք
Լա Կասթօնյը — — — Հալմէն



ՇԱՔՈՒԹԵՐԻՔ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱԲԱԿԱՆ
կը հրատարակուի ամէն Շաբաթ օրեր,
ՏԻԳՐԻՍ Հրատարակչական Ընկերութեան կողմանէ:
Յ. ՂՈՒՄՐԻԿԵԱՆ, ԳԱՆՁԱՊԵՏ.

ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ ՈՒ — ՕՏԱՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ
ԲԱՆԱՏԱՅԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՐ
Տ. ՍԺ. Տարեկան 10 Փրանք.
Տարեկան 1 50՛
Վեցամսեայ 75՛
Եռամսեայ 40
Բաժանորդագրին ԿԱՆՆԻԿ
Վճարելի է միշտ:

Ծրար կամ նամակ ուղղել հետեւեալ հասցէին
To the DICKRIS PUBLISHING CO., 628 Third Ave., New York City.
Entered at the Post Office at New York as Second Class Mail Matter.

ՆՆԻ ԵՈՐՔ, ՇԱՔՈՒ, ԱՊՐԻԼ 2 1898.

Ո Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Ք

Գ.

Ամերիկայի տա-
ԱՌԵՒՏՈՒՐ ԵՒ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ. րազեր կենաց
ՀԱՅ ԳՈՐԾԱՌՈՐՆ ԻՆՁ ԸՆԵՆՈՒ Է ԱՆ- մասնուող Հայ
ԿԱՆ ՄԱՐԴ ԸՂԱՆՈՒ ՀԱՄԱՐ գործաւորու-
թիւնն կարելի

է երկու որոշ դասակարգելու բաժնեւ, որոց մին բազկա-
ցած է անոնցմէ որք նոր եկած են, և օրէ օր գալու վրայ
են. իսկ միւսին կը վերաբերին անոնք՝ որք երկար առեւն
ի վեր եկած ու գործարանաց մէջ անընդ՛ատ գործելով՝
պզտիկ գուճար մը հաւաքած են, և տակաւին կը գործեն
գործաւորական կեանքէն միշտ դժգոհ ու ձանձրացած:

Դիտել տալու է թէ՛ Հայ գաղթականութեան թէ՛ նո-
րեկ և թէ՛ երկար տարիներէ ի վեր հոս հաստատուող դա-
սակարգին մէջ գործաւորական կեանքէն ախորժողներ կան
քիչ շատ: Ասոնք իրենց միտքարութիւնն կը մտնեն այդ
կեանքի մէջ. գոհ են անկէ: Իհարկէ մեր բաժնեւն ու
ընկերներն այդ դասակարգին չեն վերաբերիր երբէք: Մէ-
կը որ գոհ է իր վիճակէն՝ անոր քարոզ կարգաւը քարին
խօսիլ կը նշանակէ: Բայց տարակոյս չկայ թէ՛ մեծաստ-
ութիւնն, և այդ ալ ստուար մեծամասնութիւնն, զբժ-
գոհ է գործաւորութենէ: Առաւօտուն Հայ բանորը տխուր
կ'արթննայ. հազիւ հապճէպով նախաճաշ մը կ'ընէ, և կը
վազէ իր անվերջանալի բեռին առջև ծով, և միտել կե-
նալ հոն տասը ժամ՝ ամեն օր: Աշխատութեան ծանրու-
թիւնն չէ որ այնչափ կը մաշէ այդ անվարժ մարդը, սա-
րի ու քարի ազատ զաւակը, որչափ մտքի անհանգստու-
թիւնն ու խռովեալ հոգին, որք կը մաշեն կեանքը կա-
մաց- կամաց, բայց վստահ ու անխուսափելի քայլերով:

Հայ գործաւոր դասակարգը ընդհանրապէս երեք զըւ-
խաւոր ճիւղերու մէջ է որ կը շարձարուի հոս, առանց սա-
կայ յանցանք մը գործած ըլլալու: Սոցա մէկ ստուար
մասը կ'աշխատի Նիւ Ինկլընտի կողմերն, կօշիկի գործա-
րաններու մէջ, մէկ մասը՝ երկաթի այլևայլ գործերու
մէջ. մէկ մասն ալ կը մաշի ոտայնանկի ճախարակին առ-
ջև երթեկեկող կիցին հետ մէկտեղ: Քիչ բացառութեամբ
ստոնց ամենն ալ կ'երազեն ազատ զբաղում մը ու-
նենալ ապրուստ մը ճարելու համար: Կը խոտովանին թէ
լաւագոյն կը սեպեն չոր հայ միայն ձեռք ձգել ազատ
գործի մէջ, քան գործաւորական կեանքով կամանդամ
խորտկին վայելել: Կ'երազեն շարունակ. յատակազիծ-
ներ կը շինեն, բայց ամեն յայտադիր իրենց գլխի մէջ գո-
յութիւն կ'ունենայ, ու միշտ հոն կը մնայ, մեռնելու կամ
մոռցուելու համար:

Պոստովանելու ենք թէ այսպիսիներն՝ մինչև աստիճան
մը՝ իրաւունք ունին վախկոտ ըլլալ: Երբ արեւն քրտին-
քով քիչ շատ դրամ ձեռք բերող մարդն կը մտածէ շու-
կայ ելնել, իհարկէ նոյն փորձը փորձողներն նախ աչքի
առչև կը բերէ: Ասանց անյոյժողութիւնն ու միասն պատ-
ուար մը կ'ըլլայ իւր գծած ուղիին վրայ՝ առանց սակայն
գիտնալու թէ՛ գործ մը չի մնասեր հոս, եթէ կանխամտա-
ծութեամբ ու բաւական դրամով սկսուի՝ փորձառու ան-
ձանց առաջնորդութեամբ: Փորձառութիւնն գործի մը
մեծագոյն դրամագլուխն է: Փաթիւք ձէնրիի հետ ըսելու
ենք և մենք թէ՛ «մէկ միայն ճրագ մը կրնամ երևակայել
որ կրնայ լուսաւորել իմ ճամբան. և այդ ճրագը փորձա-
ռութիւնն է»: Առևտուրի մէջ փորձառութիւնն ունենալու
աճմար առևտուրի մէջ մտնելու է. առանց ըրու մտնելու
կարելի չէ լողալ ուսանիլ, բայց այս պարագայից տակ մեր
անփորձներն ուրիշներու փորձառութեանն օգուտ քաղե-
լու են՝ առաջին քայլը առնելու համար:

* * * * *

Առնենք նախ կօշիկ շինող գործարանաց մէջ մեր աշ-
խատող Հայրենակիցներն, որոնք 1000է աւելի կը կարծուին
ըլլալ՝ Նիւ Ինկլընտի այլ և այլ կողմերն ցրուած: Ասոնցմէ
ոմանք՝ գուցէ շատեր 200է մինչև 1000 տոլար, երբեմն ա-
ւելի դրամ ունին հաւաքած և զանոնք դրամատան մը
մէջ բանտարկած՝ անգործ: Թէև հարուստին դրամը ա-
մեն օր ու ամեն գիշեր կը գործէ անընդհատ՝ առանց իր
տիրոջ կողմէն մասնաւոր ջանքի մը, բայց մեր այս աղ-
քատ գործաւորաց մի քանի տոլարը անգործ կրնայ նկատ-
ուիլ՝ երբ տարին անշուն տոկոս մը միայն կը բերէ իւր
տիրոջ, որով այս վերջինն չէ կարող սրբել իր գործաւո-
րական քրտինքն՝ նոր կեանքի մը մէջ մտնելու համար:

Այս գործի մէջ աշխատող Հայրենակիցք արհեստին ա-
մեն ճիւղերը գիտցող անհատներ ունին իրենց մէջ, ա-
նանկ որ գործարան մը դարձնելու համար օտար մասնա-
գէտի մը պէտք չեն ունենար երբէք, եթէ կարելի ըլլայ
զանոնք իրարու քով բերել: Եւ ինչո՞ւ առանցմէ քանին չը-
միանան ու իրենց գիտցած արհեստն փոխանակ ուրիշ օգ-
տին, իրենց իսկ շահուն համար գործածեն: Հայ կօշկա-
գործները գուցէ մտածեն թէ՛ կօշիկի գործարան մը անկա-
րելի է որ Հայք կարենան հաստատել. բայց գիտնալու է
թէ՛ ամեն գործարան Նիւ Ինկլընտի աճալին գործարան-
ներուն չափ մեծ ըլլալու չէ անպատճառ: Հոս, Նիւ Եօր-
քի մէջ, Նասո փողոցին վրայ և ուրիշ կողմեր կան շատ
մը պզտիկ գործարաններ, որոց արտադրութիւնն մի քա-
նի կօշկավաճառի խանութը միայն կը լցնեն այս քաղա-
քիս մէջ, և շրջակայները երբեմն:

Անշուշտ պիտի առարկուի թէ՛ այսպիսի պզտիկ գոր-
ծերն գոհ կ'երթան մեծերուն: Արդարև ճշմարիտ է այդ
մինչև աստիճան մը: Պզտիկ ձուկերը մեծ ձուկերուն միշտ
կերակուր կ'ըլլան, բայց մոռնալու չէ թէ՛ պզտիկները
միշտ կան և կ'ապրին, և ստոնք են որ օր մը կը մեծանան՝
ուրիշները կ'ըլլու համար: Պզտիկ գործ մը պզտիկ ծախ-
քեր կ'ունենայ. և երբ գործաւորն է գործին տէրը, նա
միշտ կրնայ մրցիլ հարուստներու դէմ, գէթ իր քոյու-
թիւնը պահելու և ազատ կերպով ապրելու մտքը: Եւ ի՞նչ
պէս ակնկալենք ազատութեան համար մեռնիլ այն անձէն
որ ազատ գործ մ'ունենալու համար գէթ փորձ մը չ'ընէր
այս ազատ ասպարէզին վրայ՝ բառին անձուկ նշանակու-
թեամբ:

Եթէ մեր սիւները ներէին, կրնայինք աւելի մանրա-
մասն գրել այս կէտի վրայ, բայց տեղույ անձկութեան
պատճառաւ ստիպուեալ ենք այսչափով բաւականանալ: Թոյլ
տալով ընթերցողին հետաքրքրուիլ և մանրամասնութիւն-
ներն ինքնին պատկերացունել իր առջև:

Կօշիկի արհեստը մեծ ճիւղ մ'է. անոր արտադրու-
թիւնն միշտ պահանջ ունի շուկային վրայ: Կանխամտա-
ծութեամբ ու շրջակայացուցութեամբ այդպիսի գործ մը
ընելու համար, մեր արհեստագէտ կօշկակարներն եթէ
միանան ու առաջին քայլ մ'առնեն, մեծ դուռ մը բացած
կ'ըլլան թէ՛ իրենց շահուն համար, և թէ՛ ուրիշներուն՝
իրենց օրինակին հետեւելու համար: Եթէ վաղը մէկ փոք-
րիկ գործարան մը հաստատուի քանի մը հազար տոլար
դրամագլուխով, և յաջողի սկսի, միւս օր հարիւրներով պի-
տի ելնեն նոյն գործին հետեւելու համար: Մենք Հայերս
միշտ այսպէս ըրած ենք: Առևտուրի մէջ իրարու կը նա-
յինք: Օրին մէկը Հայ մը Տաճկական խալիի գործ մը ըս-
կըսեց, և յաջողեցու մի քիչ. քիչ վերջ շատեր հետեւիլ
սկսեցին. և եթէ այս մասին մեծ դրամագլխի պէտք չ'ը-
լար, գուցէ խալիի քաճառականներու թիւը շատ ու շատ
բազմանար վերջի քանի մը տարիներուն մէջ:

Փրօվիտէնս գտնուող մեր Հայրենակիցներէ մին, մէկ
երկու տարի առաջ, պտղավաճառի մը խանութ կը գնէ,
նոյն առևտուրով զբաղելու նպատակաւ, և քիչ շատ յա-
ջողութիւն կը գտնէ. հետեւողները կ'սկսին, անանկ որ
այսօր իտալացիք Փրօվիտէնսի մէջ գրեթէ կորսնցուցած
են այդ ճիւղը, որ կարծես երբեմն իրենց մենավաճառն էր
ազգային:

Այսպէս պիտի կրնայ ըլլալ նաև կօշիկի գործը. բա-
է որ մի քանի անձինք առաջին քայլն առնեն, հետեւող-
ներն շատ պիտի ըլլան անշուշտ:

Այս խնդիր մեր կօշկագործներու խորին ուշադրու-
թեան յանձնելով՝ յաջորդ յօդուածով կը ջանանք պար-
զել թէ՛ ինչո՞ւ ընկերութիւններն չեն յաջողիր մեր մէջ:
Հ. Է.

ԱՂԻՆՐ

Վաղը Ս. Ոսկերեան եկեղեցւոյն մէջ պիտի խօսի Պատ.
Գ. Զիթճեան, նիւթ ունենալով «Հաւատք և Գործ»:

Վաղը երեկոյ Ազատ Լաւարանի մէջ պիտի խօսի Տթթ.
Սունի նիւթ ունենալով «Խորհրդի պատճառները, և ա-
նոնց գէ՛մ գործադրելի արգելիչ առողջապահական միջոց-
ները»: Եւ Պատ. Գ. Զիթճեան պիտի խօսի, նիւթ ունե-
նալով «Քաղաքացիութիւն»:

Ուշտի Շօպօքընի եկեղեցւոյ շինութեան խանձնաճ-
նախուճը կը հրաւիրէ Ուշտի Շօպօքընի բոլոր Հայերը
ներկայ գտնուիլ յառաջիկայ Կիրակի ժամը 3ին 'ի Պէրնարա
Շօլ, ուր պիտի որոշուի եկեղեցւոյ շինութեան գետինը
գնուիլն:

Ո Ր Բ Ե Ր Ո Ւ Ս Ի Ի Ն Ա Կ Ը

Թրոյ Մարտ 28.
Վերջապէս մենք ալ ունեցանք
Որբախնամ Ընկերութիւն մը: Դեռ
առաջին շաբաթն է որ սկսած ենք.
11 անգամ ունի Ընկերութիւնը, ա-
ստնցմէ երեքն կին՝ և մէկն ալ 8ը
տարեկան օրրող մ'է: Մեր ընկեր-
ներէն մին շաբաթական 50 սէնթ գըր-
ուեցաւ: Կը յուսանք թէ՛ կարճ ժա-
մանակի մը մէջ պիտի կրնանք որբ
մը պահել:

Դեռ մեր խմող և թուղթ խաղ-
ցող խումբերը կը շարունակեն իրենց
ընթացքը: Այսպիսիներուն անյոյժ-
ողութիւն կը մաղթենք, իսկ Որբա-
խնամ Միութեան՝ յաջողութիւն:

Մալթոյ Վարդապետ ԼՍ գրէ
Մարտ 23 թուով «Շնորհակալութեամբ
ստացայ ինպատ որբոց § 22.50, Նիւ
Պրիփրթ (Մէս) քաղաքի սակաւա-
թիւ Հայերէն: Հանգանակութեան
մասնակցած են 20 հոգի: Այսօր կը
դրկեմ Կ. Պօլսոյ Պատրիարքին 50
տոլարի չէք մ'ևս»:
Համագումար § 525.00:

Ուսթըրէն Տ. Ա. Ռափաէլեան կը
գրէ, «Տեղույ նորակազմ Դերասա-
նական ինումը անցնալ Շաբաթ երե-
կոյ, Ս. Փրկչի սրահին մէջ, ինպատ
որբերուն, ներկայացուց Սենքերիմ
Թագաւորի ողբերգութիւնը: Թէև
մուտքը 10 սէնթ էր, բայց ցաւալի է
ըսել թէ՛ հազիւ 180 ազգայիններ ներ-
կայ էին: Հակառակ բեմի անյարար-
ութեան, դերասանները յաջողու-
թեամբ կատարեցին իրենց դերերը:
Ամեն քաջալերութեան արժանի է Դեր-
իւնումը»:

(Մեր յատուկ թղթակցէն)
Ուսթըր, Մարտ 28.

Անցեալ շաբաթ երեկոյ Ս. Փրկչի
սրահին մէջ, երկրորդ անգամ ըլ-
լալով, Սէնքերիմ թագաւորի ողբեր-
գութիւնը ներկայացուեցաւ ի նպատ
որբոց. հակառակ մուտքի խիստ ա-
ժան, 10 սէնթ ըլլալուն, տեղույս
Հայերու մէկ հինգերորդ մասը հա-
զիւ ներկայ էր ներկայացման:

Մեր ամենանուիրական պարտքին
մէջ թերացած կ'ըլլանք՝ երբ ամե-
նաթշուառ որբերուն ի նպատ տըր-
ուած ներկայացման մը չենք փու-
թար բողոքիս ներկայ գտնուելու:
Այլ ժամանակ չ'որ ուս անտարբե-
րութեան ոգին վաննէք մեր մէջէն:
Դերակատարները յաջող ու ճարտար
կերպով կատարեցին իրենց դերերը:
Հասոյթը 15 տոլար միայն եղաւ:

Պատուաբեր է այս՝ 7-800 Հայերուս
համար: Անկեղծութիւնը կը պահան-
ջէ ըսել թէ՛ երեք ամիս առաջ ինը-
պատ որբերու բացուած Հանգանա-
կութեան Ուսթըրիք տուին հարիւ-
րաւոր տոլարներ, բայց ամիսներ
վերջ պէտք էր որ 10ական սէնթեր
ալ նուիրէինք միևնոյն նպատակին,
քանի որ որբերու պահանջը շատ
մեծ է:

Նորակազմ դերասանական խում-
բը պիտի որոշէ որ իւր ներկայացու-
մներէն զոյացած հասոյթով իւր ա-
նուսով երկու որբ պահէ, որոնց
լուսանկարներն ալ բերել պիտի տայ:
Բալձալի է որ խումբը որոշէ ու
գործադրէ իւր այս օղտակար փա-
փաքը:

Անցեալ Կիրակէ Ազգ. Լաւարանին
մէջ վիճաբանուեցաւ հետեւեալ կան-
խառ որոշուած նիւթին վրայ՝ ներկայ
տիրող օրէնքները արդար են թէ՛ ո՛չ
դրական կողմը պիտի փաստէր Տ. Ս.
Մերսիան. միայն այս վերջինը կրցաւ
իր փաստերը պարզել. Տ. Շաղաւեան
յաջորդ Կիրակէ պիտի խօսի:
ՀԱՅԿԱՌՈՒ

ՀԱՅ ՍՈՒՆՆԵՐ

Մարտ 26, Չըլիսի.

Խառնաշփոթ վիճակ մը որ կը տիրէ Չըլիսիական Հայերու մէջ, ո՛չ կազմակերպութիւն և ո՛չ հոգարար- ձութիւնն կունդուն կը մնան: Տեղ- լոյս կանաչարութիւնը շատ ոնգամ հայկական կնճռոտ և գձուց գտտերով կ'զբաղի: Պոթոնի Բարեսիրական Ըն- կերութեան ջանքերը, վարդապետին ու Պատուելիին աշխատութիւնները, ի դերն ելան Չըլիսիական Հայերու մէջ խաղաղութիւնը վերականգնե- լու համար: Այս բոլոր շարժումներն և խառնակութիւնները կը բղխին մաս- նաւորապէս և գլխաւորաբար մէկ շահասէր անձնակորութենէ մը—Պոյ- լոցի կիրակոս Մարգարեան— անու- նով:

Ասկէ առաջ՝ Մամաս Ամմու ա- նուեով հայ գործակալ մը կար հոս, որոյ շահու աղբիւրն էր Հայերուն համար գործ գտնել որոշեալ վար- ձատրութեամբ: Յիշեալ Մարգար- եանը վերջերս 300 տոլար վճարելով Մամաս Ամմուին՝ անոր պաշտօնը կը ծնէ, և այն օրէն ի՛նչպիսի Հայ գոր- ձարները կեղծեալ շատերէ 20-25 տոյս կանխավճար մը կ'ստանայ յիշեալ գործարանի մէջ գործ տալու համար: Այս դրութիւնն ի հարկէ եր- կար չէր կրնար տեսլ. դժգոհութիւ- նը կամաց կամաց խռովութիւններ յառաջ բերաւ, անանկ որ այս գէպ- ճերէ առաջ եկող շատ մը դատար դեռ դատարանաց առջև կը գտնուին:

Մարգարեան բաց աստի ճաշա- րան մ'ալ ունի. իր «գերիններն» ըս- տալուած են այդ ճաշարանը յա- ճարելու: Բարձր գիներ վճարե- լով այնպիսի կերակուրներու համար, որոնք ոչ միայն անգարար չեն, այլ և թունաւորիչ՝ մեր բազմաշարժար աշխատանաց համար. սակայն ո՛վ կը համարձակի ուրիշ ճաշարան երթալ, պատիժն անխուսաբար է: Գործար- անի Տեսուչն դուրս կը դնէ զայն անմիջապէս՝ Մարգարեանի հրահան- գով:

Այս է պատճառ որ Հոգարարձու- թիւնն ալ չ'կրցաւ ապրիլ: Մարգար- եանի շնորհիւ անոնք ալ ցրուեցան, որովհետև Մարգարեանի շահուն չի համապատասխաներ ազգային կազ- մակերպութիւն մը ունենալ հոս...: Անցեալները մէկին հանդիպեցայ որ նոյն գործարանին մէջ կը գործէր սկիզբները, յետոյ Մարգարեանէն ձգուած՝ պարապ կը պատէր. հար- ցրի թէ կը գործես. —պատասխանեց թէ, վերստին կաշառք տալով կըր- կին «Սուլթան Համիտ» գործարանը մտած՝ կը գործէ: ՀԱՅԿ-Ա.ԿԱՀ

Մարտ 26, Ֆիշպըրկ.

Տեղիւնի 18րդ թւոյն մէջ Ֆիշ- պըրկէն Գրուած նամակ մը կարգա- ցիւք որ Պ. Նամակագիրը՝ Պրք. Տ. Փէյլիվանեանի, Ն. Թէրզիեանի, Մ. Մու- սէգեանի և Յ. Ներսէսեանի հետ պա- տահած մէկ անձան դէպքը յիշեալ վերջ, կը յարէ թէ յիշեալ Պարոն- ները երբ «թանգարանի համար ստակ կ'ուզուէր, կը դժգոհմամակին մինչեւ իսկ 25 սէնթ տալ են»:

Քաղաքիս Ազգ. Գրադարանի վար- ձութիւնն իւր բարոյական պարտա- կանութիւնն կը համարի հրապարա- կաւ յայտարարել թէ վերոյիշեալ Պարոնները՝ բացի Մ. Մուսէգեանէն ուրիշ շատ մը Հայերու հետ մասնակ- ցեցան գրադարանի համար բացուած հանգանակութեան. հետևաբար ա- լելորդ է ըսել թէ սխալ հաղորդ- ուած է Ձեզ այդ լուրը:

Ի Դիմաց Ֆիշպըր. Ժող. Գրադ. վարչութեան Ս. ՈՍԻԿԵԱՆ

Նաշուէ, Մարտ 26.

Տեղիւնի 18րդ թւոյն մէջ կար- դալով Պոթոնի մեր Դերասանական խմբին դէմ խիստ քննադատական մը, կուզամ ըսել զձեզ քննադատող Պա- րոնին թէ՛ շատ կը սխալի երբ կ'երա- զէ Աղամեան մը ծախահարել Պոս- թոնի Հայ բեմին վրայ: Մենք շատ կը փափաքինք անկեղծ քննադատող- ներ ունենալ, բայց ոչ թէ մեզմէ ե- զական հանճարներ պահանջողներ:

Լօվլէյի, Ուոթրիի և Լօրէնի. Հա- յերը ուրիշ առիթներու իրենց գոհու- նակութիւնները յայտնած են մեզ: Պոթոնի Հայերէն շատերն ալ գոհու- նակութիւններն յայտնեցին մեզ, ներ- կայացումէն յետոյ: Մենք գոհ ենք այսչափով: Յիշելու ենք նաև թէ \$40ի ֆիսա մը ունեցած չէ՛ խուսիք- նիս, այլ չ'չնչին գումար մը:

Յ. ՊՈՐՉԱԳԵԱՆ

ՔԼՈՆՏԱՅՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրէզնօ, Մարտ 12.

Լսած էք գուցէ թէ նախորդ Յուլիսին երեք Հայեր տեղէն ուղե- ւորեցան ի Քլոնտայք, որոց երկուքը Բանաստի գծով գացին ու դեռ ճա- նապարհին վրայ են, իսկ մին՝ Չիլ- գութ փասի ճամբայով գնաց, և ող- ջամբ տեղ հասնելուն լուրն ստա- ցանք:

Նկատելով որ ձեր թերթն ամե- նէն աւելի տարածուած թերթն է ժողովրդեան մէջ՝ ինձ կը թուի թէ օգտակար պիտի լինի թէ՛ այդ խընդ- րոյն վերաբերեալ հետեւեալ կարեոր լուրերն հրատարակէք Ձեր թերթին մէջ:

Յիշեալ բարեկամ տղուն, հաս- տատամիտ և բողոքովին վստահելի երեստատար մի լինելով՝ կրնամ վըս- տահ ըլլալ իւր գրեւորած ճշմարտու- թեան վրայ, մանաւանդ թէ պատ- ճառ մը չ'կայ կազմածելու նորա ան- կեղծութեան:

Ճանապարհի դժուարութեանց, տաժանելի կեանքին, վտանգներու և արկածներու մասին չեմ ուզեր կրկնել նորա զրածներն, քանի որ Ա- մերիկեան թերթերու մէջ ալ կը պատ- մուի այդ ամենն: Էական խնդիրն սա է որ կարծուածին չափ դիւրին չէ օսելոյ հանք գտնալ ու ձեռք բե- րելն: Ահա քաղուած մը իւր նամա- կէն:

«Աշունն եկող հազարաւոր ան- ձինքներ խիստ շատ էին Քլոնտայքի համար: Ոմանք բազմ ունեցան գործ գտնալու, իսկ մնացեալներն ստիպ- ուած են թողուլ ու ետ դառնալ՝ ա- նոթութենէ չը մեռնելու համար, բայց կը վախճուի թէ ճանապարհին ցուրտէն մեռնին: Ասոնք յուսահատ և յուսախոր եղան, ու սեռան թէ երկիրը բողոքովին տարբեր էր լրա- գրաց մէջ կարգացածներէն: Մղոն- ներով տարածութեամբ հանքերուն քիչերն են որ կը վճարեն՝ ծանր աշ- խատանքով, թէ և ոմանք ալ չափէն ա- լելի կ'արտադրեն: Այս վերջիններու ամենքն ալ իւրացուցուած են: Նոր տեղեր գտնելու համար բազմաթիւն- դիրն պէտք է որ ամիսներով փնտռէ, իւր կոնակին վրայ կրնով ամբողջ ուտելիքն, անկողինն ու գործիքներն, և գանալէ վերջն ալ՝ հանած օսկիին կէսէն աւելին պարտաւորուած է վը- ճարել կառավարութեան...: Թերևս խորհիք թէ այդ կերպով եղած խու- դարկութիւնն այնչափ դժուարին չէ, բայց երբ նկատեք թէ ո՛չ կենդանի- ներ և ո՛չ ալ ուրիշ դիւրութիւններ կան մարդոց աշխատութիւնը թե- թեցուցնելու. և երբ խորհիք ցուրտին սաստկութիւնն, ձիւնի և սառի թանձրութիւնն, զորս ինք իւր ոչինչ գործիքներով պիտի փորէ ու կտորէ,

և ո՛վ գիտէ որչափ անգամներ պիտի կրկնէ այդ գործողութիւնն՝ առանց արդիւնք մի ձեռք բերելու, յայն- ժամ կրնաք ըմբռնել թէ որչափ յուսահատական և անիմաստ է այս կեանքը»:

Ամենէն վերջ՝ սա կերպով կը վերջացնէ. «Եթէ կան գալ փափա- քողներ, խորհուրդ կ'ուտամ որ շի- գան, կամ գոնէ \$1000էն պակասով ճամբայ չ'եւլան. դրամ որչափ շատ ունենան, այնչափ աւելի հաւանա- կան է յաջողութիւնն» ևն:

Այս տեղեկութիւններն Ձեզ հա- դորդելով իմ դիտաւորութիւնս չէ Բրնայք երթալու փափաքող Հա- յերն բողոքովին ետ կեցունել իւր- եանց նպատակէն. հաւանականաբար ազդեցութիւն ալ չը պիտի ընէ այն- պիսեաց մաքին վրայ այս կերպ նա- մակներն. միայն սա կ'ուզէի ըսել որ խոհեմութեամբ շարժին ու յայտնու- և անպարտասա կերպով չը նետուին այդպիսի արկածալից ճամբու մը վը- րայ: Թող տարակոյս չունենան թէ՛ ինչպէս ամեն տեղ՝ հոն ալ յաջողու- թիւնն դրամ ունեցողինն է: Անդրամ անձն՝ շատ շատ գործաւոր կրնայ ըլ- լալ, և մէկ ժամու համար ստացած \$1ը կը համեմատի այս տեղի 15-20 սէնթին, քանի որ ամեն ուտելիք նիւթերու լիպրան մէկ տոլար է, ըս- կըսեալ ալիւրէն մինչև միսը, գետ- նախնձորը, շաքարը, աղը ևն. ևն:

Ուրիշ օգտակար գաղափար մ'ալ սա է թէ՛ երթալու փափաքողներն՝ միայն ոսկույ հանք գտնալու խոր- հրդով ճամբայ ելնալու չեն, այլ, եթէ կրնան, առևտրական ձեռնարկ մի ընեն մի քանի անձանց ընկերակ- ցութեամբ: Հոն գտնուող բարեկամս սա քանի մի տողերն կը գրէ այդ մա- սին. «Առևտուրը ամենէն աւելի շա- հաւոր գործն է. մէկ կերպու տար- ան մէջ կարելի է հազարաւոր տո- լարներ շինել, բայց նախապէս քա- նի մի հազար տոլար դրամագլուխ գնելու և անվախ կերպով գործելու է»: Ուրիշ անգ մը այսպէս կը գրէ.

«Եթէ \$40-50 ի շափ չունեն բերած լինէի հետս, անկասկած \$1000ի պի- տի ծախսէի զայն. 4-5 եարտայ եր- կայնութեամբ բարակ պարան մի ծա- խեցի \$15ի... ամենահասարակ մոմ մի՛ 1-1½ տոլարի կը ծախուի այս ձը- մեռ. բայց խորհուրդ չէք թէ այդ կարգի նիւթեր միւշտ այդ գինը կ'ու- նենան. կրնայ ըլլալ որ գալ տարի առտնց երեսն ալ նայող չ'ըլլայ, և մարդ չը կրնար գուշակել թէ ի՞նչ բան այդպիսի անօրինակ գնեցով պի- տի ծախուի յառաջիկային: Պարագա- ները կ'ստեղծեն այդպիսի նիւ- թերու անսովոր պահանջն: Այս ամենէն կրնաք հետեցունել թէ առ- ևտրական մը մեծապէս կ'օգտուի այդ պարագաներէն»:

Յ. Մ. Ն.

Յ. Մ. Ն.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՈՒՌԸ

(Շարունակելի և վերջ)

Ողբալի պիտի ըլլայ իրօք Հայաս- տանի վիճակը բուն իսկ իւր ազա- տութենէն վերջ, երբ իւր գաւակնե- րը ձեռնուռայն դառնան իւր քով, իսկ օտարները գան միտուին երկրին սրտին մէջ, գրաւեն բոլոր հարստու- թեան աղբիւրները ու մենք դարձ- եալ մնանք օտարին ձեռքին սակ գործիք ու խեղճուկ ժողովուրդ մը, որ ուր քուրի հոն կ'երթայ:

Հեռատեսութեան այս սոսկալի պատկերը իմ մէջ գաղափարի մը ծնունդ կ'ուտայ, որ բուն իսկ նիւթն է այս յօդուածին: Կ'երևակայեմ Հայաստանի բոլոր- տիքը քաշուած հսկայակերտ պարիսպ մը, որուն մէկ կողմը խոշոր դուռ մը կախուած ըլլայ՝ երկաթեայ հաս-

տատուն շինուածքով: Այդ դրան մէջ, որմէ գատ ուրիշ անդէ անկա- րելի է Հայաստան մտնել. պահապան- ներ դրուած ըլլան սուրբերով և գէն- քերով զինուած:

Ազատութեան որոտընդոտս յայ- տարարութենէն վերջ այդ մուտքին մէջ անկող քննութիւն մը սկսի բո- լոր Հայերուս համար, որ արտասահ- մանէն մեկնելով կ'ուզենք մեր սի- րելի հողին գրիմել:

Այդ քննութեան լիազօր իշխա- նութեամբ դուրս հանուին բոլոր ա- նոնք, որք ձեռնուռայն ետ կը դառ- նան իրենց Հայրենիքին, բոլոր անոնք որ տարափոխիկ հիւանդութեամբ մը վարակուած են, բոլոր անոնք որ եր- բէք բան մը աւելցուցած չեն իրենց մտային ու հոգեկան կարողութեանց վրայ, բոլոր անոնք որ ազգային ըզ- գացումը մ'արեցուցած՝ լոկ անձնա- սիրութեան ոգին կը կրեն իրենց մէջ, բոլոր անոնք որ թիթեռնիկի մը անհոգ կեանքը վարած են, վեր- ջապէս բոլոր անոնք որ օգտակար ըլլալու անդ՝ ազատ մը պիտի ըլլան, Հայ անարատ խաւին մէջ: Դողանք Դատաստանի այդ անխնայ Դուռնէն (վերջ) Կ. ԳԱՆՈՒՍԵԱՆ

ՆԺՅԵՆԻՆ ԱՂԵՐՍՈՒՆ

Նժեհեթիւնն որքա՞ն դառն ես.

Դեռ չի ծաղկած կեանք կը խամբես. Օ՛հ, պանդխտի դուք սև օրեր,

Սիրտս ու հոգիս իսպառ կրծեր:

Այդչափ անգութ, ո՛հ, մ'ըլլար դու՛ Լսէ՛ ձայնիս աղբնարկու.

Ժպտիր ինձի որ կեսանք անեմ,

Նոր աւելնով ես սէր երգեմ:

Վրաս այդչափ մի ծանրանար,

Նժեհեթիս սեալ դիմօք յար.

Թող տուր շնչեմ ալ ազատ շունչ,

Բաւ է նստիմ, հեծեմ լուռ, մ'ուռնջ:

Թո՛ղ տուր Ֆրէնմ դաշտերն ազատ,

Թո՛րց մօտիկ, լերանց գագաթ.

Ո՛հ, իմ վրաս գու՛թ ունեցիր,

Ըսէ՛ ինձի, «դու ալ ժպտիր»:

Անէ՛ծքի պէս մութ ուրուական,

Աչքիս առաջ քեզ միշտ տեսնամ.

Թող պահելի մը շուրջս դիտեմ,

Աչացս ալի արցունք սրբեմ:

Այս հառաչանքս իմ սոսկալի,

Ձիս գերեզման վախճամ տանի.

Գիշերներն ալ, ա՛խ, քուն չեմ,

Մահուան շոտը միշտ կը շնչեմ:

Օ՛հ... դու դժխեմ՝ ճակատագիր,

Ինչո՞ւ այսպէս, սև գրեցիր.

Խնդրե՛մ, գթա՛մ ինձ, կարեկցի՛ր,

Հէգ նժեհեթիս կեանք խոտացիր:

Դեկ. 7, Փրովիտէնս ԱՏՈՄ

Չ Ո Ւ Ա Ր Ճ Ա Լ Ի Ք

Տիկինը—(յուզուած) Ի՞նչ կ'ընես Մինի, հաց կը շաղես առանց ձեռ- քերդ լուսալու:

Նոր սպասուհին—Աստուած իմ! Ի՞նչ տարբերութիւն կ'ընէ, սև հաց է շաղածս:

Օր. Ա.—Ձեմ գիտեր, սիրելիս, արդեօք 100 տարի պիտի ապրիմ:

Օր. Բ.—Ո՛հ, սիրելիս, եթէ տա- կաւին երկար ժամանակ 18 տարեկան ըլլալը ըսես:

Մ Ա Ն Ր Ա Լ Ո Ւ Ր Ք

—Վերջին պահուս ստացանք Բար. Ընկերութեան Ատնասպետի կողմէն ընդարձակ տեղեկագիր մը, որուն մէջ Դիւանը երկարօրէն կը տեղեկա- գրէ իր կազմութեան օրէն մինչև այսօր կատարած գործերը և կը ներ- կտայցնէ ըրած օգնութիւններու գու- մարը և թիւը: Յայորդ Շաքաթ պիտի հրատարակենք այս տեղեկագիրը:

—Տ. Գ. Յակոբեան, Պոսթոնէն, որ վերջերս Նիւ Եօքթի Բարեգործա- կան Ընկերութեան գործակալ ընա- բուած էր, կը լսենք թէ հրաժարած է այդ պաշտօնը ստանձնելէ:

